

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՍԵՁՈՆԱՅԻՆ ԱՐՏԱԳՆԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՎՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Հայկական ԽՍՀ-ում արտագնացությունը պայմանավորված էր մի շարք ընդհանուր և առանձնահատուկ գործոններով: Ահնջև դրա հետ առնչվող պրոբլեմների ամրոզչական վերլուծությանն անցնելն անհրաժեշտություն է զգացվում ինչպես այդ հասկացության որոշ կողմերի, այնպես էլ միգրացիայի գործոնների դասակարգման և դրսևորման ոլորտների պարզարանման:

Խորհրդային տնտեսագիտական և սոցիոլոգիական գրականության մեջ «գործոն» հասկացության վերարերյալ միանշանակ ըմբռնում կամ կարծիք չկա, քանի որ այն, սերտորեն փոխկապակցված լինելով «պայմաններ» և «պատճառներ» հասկացությունների հետ, հաճախ նույնացվում է: «Պայմաններ» կամ առավել լայն իմաստով «կյանքի պայմաններ» հասկացությունը ընդհանրում է շրջապատող միջավայրը, որտեղ ապրում է մարդը: Եթե գործոնները ընդհանր և հասարակական պայմանների սյն ընդհանրիչներն են, որոնք ազդում են որևէ երևույթի վրա՝ համարվելով նրա շարժիչ ուժը, ապա պատճառը հանգեցնում է կոնկրետ գործողության: Ընդհանրացնելով վերն ասվածը՝ կարող ենք նշել, որ «պայմաններ», «գործոններ» և «պատճառներ» հասկացություններն ընդհանուրի, ամրոզչի և մամի փոխհարաբերության մեջ են¹:

Վ.Ի. Պերևեդենցևը միգրացիոն գործընթացների համար առանձնացնում է տնտեսական, էթնիկական, ժողովրդագրական, ընդհանր (ընտանիքագրական), մշակութային, բարոյական, սոցիոլոգիական, սոցիալ-հոգեբանական գործոններ: Վերը նշված գործոններն առավել ընդհանուր գծերով ներկայաց-

վում են նաև երկու խմբերով՝ ընդհանր և հասարակական, օրյեկտիվ և սուբյեկտիվ: Միգրացիայի ընդհանր գործոնները «ընդհանր պայմաններում տարածքային տարրերություններն են»,² իսկ հասարակականը՝ «հասարակական պայմաններում տարածքային տարրերություններն են»:³

Բնական գործոնները իրենց հերթին բաժանվում են լեռնագրական (ռելիեֆի), հողային, ջրարանական, երկրարանական, կլիմայական, բուսարանական և կենդանարանական ընդհանրիչների: Առավել բարդ կառուցվածք ունեն հասարակական գործոնները: Օրինակ՝ տնտեսական գործոններում առանձնացնում են ժողովրդական տնտեսության կառուցվածքի տարածքային տարրերությունները, զրադվածության հնարավորությունները, իրական և նվազագույն աշխատավարձը: Օրյեկտիվ գործոնները, ըստ Վ.Ի. Պերևեդենցևի, գտնվում են «աշխարհի» կողքին, իսկ սուբյեկտիվը՝ «մարդու կամ անհատի»:⁴

Տ.Ի. Ջալալովսկայան, խորացնելով այս բաժանումը, առավել ընդհանուր գծերով միգրացիայի գործոնները բաժանում է երկու խմբի՝ հասարակության կողմից չկառավարվող և կառավարվող, մյուսը՝ կարգավորիչ գործոնների: Առաջինը հասարակության կողմից չի ենթարկվում անմիջական համեմատարական պլանավորման: Դրանց են վերաբերում ընդհանր պայմանները, տեղանքի աշխարհագրական դիրքը, յուրացումը: Այստեղ առանձնացվում են նաև անմիջականորեն չկառավարվող, բայց լրացուցիչ կերպով կարգավորվող գործոններ. ժողովրդագրական,

² *Переведенцев В.И.*, указ. соч., с. 107.

³ Там же, с. 107.

⁴ Там же, с. 105.

¹ *Рыбаковский Л.Л.*, указ. соч., с. 133-145.

սոցիալական, սոցիալ-հոգեբանական, էթնիկական և այլն: Վերջիններիս հեղինակը անվանում է նաև կառուցվածքային գործոններ, որոնք ազդում են բնակչության շարժունության տեմպերի և միգրացիոն ինդեքսի կառուցվածքի վրա: Կարգավորիչ գործոնները անմիջականորեն կարգավորվում են հասարակության կողմից, որոնց թվին են պատկանում կապիտալ ներդրումները, աշխատավարձը և դրա ռեզիդնալ տարբերությունները, բնակարանային ֆոնդի ծավալը, պահանջ-մուրհների հասարակական ֆոնդերը և այլն¹:

Չեղինակներից ոմանք միգրացիայի գործոնների դասակարգման համար հիմք են ընդունում նրա դրսևորման ոլորտները և դրանում առանձնացնում տարածքային, ճյուղային և արտադրական գործոնները: Եթե առաջին խմբին վերաբերում են բնական պայմանները, տարածքի յուրացվածությունը, աշխատանքային ռեսուրսներով ապահովվածությունը, ապա երկրորդ խմբին՝ ճյուղի տեխնիկական զարգացման առանձնահատկությունները, որակյալ կադրերով ապահովվածության և ճյուղի սոցիալական զարգացման մակարդակը, իսկ երրորդ խմբին՝ աշխատանքի արտադրողականության մակարդակը և դրա կազմակերպումը, աշխատավորների նյութական իրախուսումը և այլն²:

Հայաստանում միգրացիայի գործոնների առաջին խումբը կապված է բնական պայմանների՝ աշխարհագրական դիրքի, բարդ ռելիեֆի, ընակլիմայական առանձնահատկությունների հետ: Բավական է նշել, հանրապետությունում մինչև 3° թեքությամբ մակերևույթները կազմում էին ամբողջ տարածքի 14,8%-ը: Տարածքի մեծագույն մասը կազմված է տարբեր թեքության լանջերից՝ 3-6° 16%, 6-16° 36,8%, 16-30° 24,1%, 30°-ից մեծ թեքությամբ գառիթափերից՝ 4,6%: Տարածքի կտրտվածությունը, քարքարոտությունը հանգեցրել է այն բանին, որ նրա կեսից ավելին՝ մոտավորապես 54%-ը, դուրս է մնացել օգտագործումից: Նրա տարածքի հագիվ 10%-ն

է գտնվում 390-1000մ, իսկ 56%-ը՝ 1500-2500մ բարձրության վրա³: Ըստ ուղղագիծ զոտիականության՝ հանրապետության բնակչության տեղաբաշխվածությունն ունի հետևյալ պատկերը.

Աղյուսակ 24

Հայկական ՍՍՀ բնակչության բաշխումը և խտությունը՝ ըստ գոտիների 1980-ական թթ. (%-ով)

Ուղղագիծ գոտիները (մետրերով)	Տարածությունը	Բնակչությունը	Բնակչության խտությունը (1մարդ քառ. կմ-ում)
400-800	1,8	3,8	166
800-1000	8,0	47,1	346
1000-1500	18,2	15,2	70
1500-2000	31,5	28,1	75
2000-2500	24,5	5,8	20
2500-ից բարձր	16,0	-	-

Աղյուսակից երևում է, որ մինչև 1500մ բարձրության վրա, որը կազմում է հանրապետության տարածքի 28%-ը, բնակվում էր բնակչության 66,1%-ը (մոտավորապես 2մլն մարդ), իսկ 1500-2000 մ բարձրության վրա, որը կազմում է տարածքի 62%-ը, բնակվում էր 33,9%-ը:

Հետևյալում բնակչության միգրացիաների հասարակական գործոնները վերջին հաշվով պայմանավորված էին արդեն վերը նշված բնական պայմաններով. «Բնական պայմանները ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի տնտեսության, մշակիչի, շփման միջոցների, մարդկանց կենսարանական և սոցիալական, հասարակական հարաբերությունների զարգացման միջոցով ազդում են միգրացիայի վրա»⁴: Այն ազդում էր նաև կյանքի պայմանների զարգացման մակարդակի, գյուղատնտեսության ուղղվածության, բնակչության զբաղվածության, թվի, խտության, արտադրության և արտադրողական ուժերի տեղաբաշխման, սոցիալական ենթակառուցվածքների վրա: Վերջիններս էլ հանգեցրել էին

³ Ավագյան Գ., Հայկական ՍՍՀ բնակչությունը, Ե., 1975, էջ 17-19:

⁴ Ավագյան Գ., Սովետական Հայաստանի տնտեսական աշխարհագրություն, Ե., 1981, էջ 50-51:

⁵ Социальные факторы и особенности миграции населения СССР (отв. ред. Рыбаковский Л.Л., Чураков В.Я.), М., 1978, с. 32.

¹ Миграция сельского населения (под ред. Заславской Т. И.), М., 1975, с. 56-61.

² Онликиеню В.В., Поповкин В.А., Комплексное исследование миграционных процессов, М., 1973, с. 9-10.

նրան, որ առանձին վարչատարածքային շրջանների միջև տնտեսական ու սոցիալական զարգացման մակարդակների տարբերությունը տատանվում էր 15-ից մինչև 20 անգամ¹: Նշված գործոններով, ինչպես նաև 70-ական թվականներին կառավարության կողմից 100-ից ավելի «տնտեսական անհեռանկարային և կենտրոններից հեռու գտնվող»² գյուղերը լուծարելու հետևանքով կարելի է բացատրել տարիներ շարունակ Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջանների բնակչության զանգվածային տեղաշարժերը դեպի հարթավայրային շրջաններ և արյունաբերական խոշոր քաղաքներ:

Աղյուսակ 25

Քաղաքային բնակչության աճի տեմպերը՝ ըստ 1926-1979թթ. մարդահամարների տվյալների (%-ով)³

Աճի աղբյուրները	1926-1930	1959-1970	1970-1979
Քաղաքային բնակչության բնական աճի հաշվին	40,0	44,8	50,9
Դրսից եկածների հաշվին	11,0	23,4	22,7
Գյուղական վայրերը քաղաքայինի վերափոխվելու հաշվին	9,0	10,3	9,8
Գյուղական բնակչության հաշվին	40,0	21,5	16,6
Ընդամենը	100,0	100,0	100,0

Ըստ աղյուսակ 25-ում բերված վիճակագրական տվյալների՝ գյուղական բնակչության հաշվին քաղաքայինը նշված մարդահամարների միջև ընկած ժամանակաշրջանում ավելացել էր համապատասխանաբար 40%-ով, 21,5%-ով և 16,0%-ով: Գյուղական աշխատունակ բնակչության որոշ մասն էլ, ամբողջովին զրադված չլինելով հանրային արտադրությունում, մեկնում էր արտագնացության:

Բացի նշված գործոններից, արտագնացությունը պայմանավորված էր նաև հանրապետության բնակչության ժողովրդագրական

իրավիճակով: 1976-1980թթ. դեռ երեք միլիոն բնակչություն չունեցող Հայկական ԽՍՀ-ում 20 հազարով ավելի շատ մարդ մուտք գործեց աշխատանքային տարիք, քան 16-միլիոնանոց ԳԴՀ-ում: Սրան պետք է ավելացնել նաև տնային և անձնական օժանդակ տնտեսություններում ընդգրկվածներին: Սա հանգեցրեց լուրջ հակասության հանրային տնտեսությունում աշխատելու ցանկություն արտահայտող բնակչության և այդ պահանջները չբավարարող նոր աշխատատեղերի միջև⁴:

Աղյուսակ 26

Արտագնացության տեմպերը՝ ըստ վարչական շրջանների 1983թ.⁵

Շրջանի անվանումը	Բնակչության քանակը 1983թ. հունվարի 1-ի դրությամբ (հազ. մարդ)	Արտագնացների տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվի մեջ (%)
1. Կայիինո	37,4	8,5
2. Արթիկ	25,4	6,3
3. Ախուրյան	36,8	6,0
4. Մարտունի	67,1	4,1
5. Սպիտակ	27,8	4,0
6. Գուգարք	29,0	3,4
7. Կամո	27,6	3,0
8. Անի	18,8	2,3
9. Արագած	14,2	2,3
10. Իջևան	27,8	2,2
11. Ղուկասյան	9,4	2,1
12. Նոյեմբերյան	30,6	1,9
13. Թալին	42,4	1,7
14. Ամասիա	20,6	1,5
15. Դրազդան	22,6	1,4
16. Ստեփանավան	16,6	1,4

1983թ. ՀԽՍՀ 36 վարչատարածքային շրջաններից 16-ում դիտարկվել են 1%-ից բարձր արտագնացության տեմպեր: Դրանում առանձնացվել է 10 շրջան, որտեղ արտագնացության չափերը հասել են 1-3%-ի, իսկ 6 շրջանում՝ 3-8,5%-ի⁶:

⁴ «Երեկոյան Երևան», 22.06.1989թ.:

⁵ Տվյալները հաշվարկվել են «О полноте учета миграции населения Армянской ССР в 1983 г.» ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նյութերի հիման վրա: Վարչական մյուս շրջաններում դիտարկվել է արտագնացության ցածր տեմպեր, որի պատճառով դրանք ընդգրկված չեն աղյուսակում:

⁶ Там же.

¹ «Սովետական Հայաստան», 15.09.1988թ.:

² Սամվելյան Լ., Գոմկցյան Լ., Գյուղական բնակչության միգրացիան ՀՍՍՀ-ում և նրա տեղարաշխումը, Տեղեկագիր գյուղատնտեսական գիտությունների, N4, Ե., 1981, էջ 18:

³ Նույն տեղում, էջ 13:

Անացած 20 շրջանում արտագնացների թվաքանակը տատանվում էր 0,1-ից մինչև 0,9%-ի միջև: Գյուղականի հետ համեմատած՝ արտագնացության ցածր տեմպեր են դիտարկվել քաղաքային ընակչության շրջանում, որտեղ կենտրոնացված էին խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները: Դրա հետևանքով ռարձր էի ընակչության գրադվածության մակարդակը այդ վայրերում (տե՛ս աղ. 27):

Աղյուսակ 27

ՀԽՍՀ քաղաքային ընակչության արտագնացության պատկերը 1983թ.¹

	Քաղաքի անվանումը	Արտագնացության չափերը (%)
1.	Արթիկ	2,4
2.	Իջևան	1,2
3.	Դիլիջան	0,7
4.	Լենինական, Ալավորդի, Սպիտակ	0,6
5.	Չարենցավան, Հրազդան	0,5
6.	Կիրովական, Աշտարակ	0,4
7.	Արարատ, Հոկտեմբերյան, Էջմիածին	0,3
8.	Դավիան, Ստեփանավան, Արտաշատ	0,2
9.	Շրևան, Արվյան, Գորիս, Սևան, Կամո	0,1

Ըստ պատմաագագրական մարզերի՝ արտագնացությունն ուներ հետևյալ պատկերը² (տե՛ս աղ. 28):

1988թ. դեկտեմբերյան ահեղ երկրաշարժից հետո ամրոդջովին փոխվեց ընակչության արտագնացության տեմպերի պատկերը Շիրակի, Արագածոտնի, Լոռու ազգագրական մարզերում: Այն պայմանականորեն կարելի է թաժանակ երկու շրջանի. մինչև երկրաշարժը և երկրաշարժից հետո ընկած ժամանակա-

հատվածը: Մինչև երկրաշարժը ընակչության արտագնացության տեմպերով առաջին տեղը գրավում էի Շիրակի (16%), իսկ երկրորդը՝ Արագածոտնի (11%) ազգագրական մարզը: Եթե առաջինի ընակչությունը վերարձակեցվել է Արևմտյան Հայաստանի էրգումի, Այաշկերտի, Կարսի շրջաններից, և դրանց մի հատվածը հարում էի քրիստոնեության կաթոլիկական ճյուղին, ապա երկրորդինը՝ հիմնականում Լասունից: Նրանք ունեն տնտեսության, կենցաղի և մշակույթի մի շարք առանձնահատուկ գծեր: Ամրոդջությամբ վերցված՝ Շիրակը և Արագածոտնի մասը իրենց տարածքով համընկնում էին Շիրակի տնտեսական շրջանին:

Աղյուսակ 28

Տղամարդկանց արտագնացության չափերը՝ ըստ Հայաստանի պատմաագագրական մարզերի³

	Պատմաագագրական մարզեր	Աշխատունակ ընակչության քանակը (%)	Այդ թվում՝ արտագնացության մեկնողների քանակը (%)
1.	Արարատ	38	2
2.	Շիրակ	36	16
3.	Գեղարքունիք	28	9
4.	Վարոց ձոր	7	-
5.	Արագածոտն	30	11
6.	Լոռի	29	10
7.	Տավուշ	26	5
8.	Սյունիք	23	-

Շիրակում արտագնացության նման տեմպերը պայմանավորված էին մի քանի պատճառներով.

Առաջին՝ շրջանի ուղիեֆով: Այն համարվում է նախալեոնային շրջան, և նրա տարածքի 80%-ը գտնվում է մինչև 1800 մետր ռարձրության վրա: Անսառնամանիք ժամանակաշրջանի միջին տևողությունը մոտավորապես կազմում է 130 օր, իսկ մթնոլորտային տե-

¹ Там же.

² Պատմական Հայաստանը XIX-XX դարերում բաժանվում էր Փոքր Հայքի, Ծովիք-Աղձնիքի, Բարձր Հայքի, Տուրուբերանի, Վասպուրականի, Գուգարք-Տայքի, Այրարատի, Սյունիքի, Արցախ-Ուտիքի, Պարսկահայքի, իսկ Հայաստանի Հանրապետությունը XX դարակզրին՝ Ջավախի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Արցախի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի պատմաագագրական մարզերի: Տե՛ս **Վարդումյան Դ.** Հայաստանի իմնական պատմաագագրական մարզերի ընդունուր ընուբագրումը (XIX-XXդդ.), Պատմա-բանասիրական հանդես (այսուհետ՝ ՊԲՀ) N2, 2004, էջ 55, 63:

³ Աղյուսակը կազմված է «Гос. ком. труда Арм ССР. Сведения о численности лиц, выезжающих на сезонные работы за пределы республики 1984 г., Е., 1985, «ՀՍՍՀ գյուղական ընակչության թվաքանակը ըստ շրջանների 1985, 1986» ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա: Աղյուսակում հաշվարկված չեն Երևանի, Կոստոթո, Վանաձորի տվյալները:

ղումները՝ 335-ից մինչև 600 մմ¹: Խիստ բնակլիմայական պայմանները իրենց ազդեցությունն են թողնում գյուղատնտեսության մասնագիտացման և դրանում ընդգրկված աշխատողների թվաքանակի վրա: Շրջանում գարգացած էին անասնապահությունը, ճակնդեղագործությունը, հացահատիկային մշակաբույսերը:

Երկրորդ՝ արդյունաբերության գարգացման ցածր տեմպերը և համապատասխան աշխատանքային տեղերի բացակայությունը: Արդյունաբերական համախառն արտադրանքի տեսակարար կշռով այն գրավում էր երրորդ տեղը: Այստեղ էր գտնվում իր մեծությամբ հանրապետության երկրորդ քաղաքը՝ Գյումրին, որի հետ ճոճանակային միգրացիայով կապված էին Շիրակի հարթավայրի մի շարք շրջաններ՝ Անիի, Արթիկի, Ախուրյանի, Ամասիայի, Թալինի շրջանները: Թվում է, թե Գյումրին, որպես արդյունաբերական և մշակութային խոշոր կենտրոն, կարող էր նշված շրջաններում մեղմացնել արտագնացության տեմպերը, բայց աշխատանքային տեղերի բացակայության պատճառով նույն պատկերն էր դիտարկվում նաև այստեղ: Քաղաքը, ունենալով Երևանից հինգ անգամ քիչ բնակչություն, արտագնացների բացարձակ թվով համարյա չէր գիջում նրան:

Երրորդ՝ արտագնացությանը նպաստում էր նաև շրջանում համապատասխան թվով մշակութային-կենցաղային օբյեկտների բացակայությունը: Այս տեսակետից այն Լոռու տնտեսական շրջանի հետ գրավում էր վերջին տեղը²: Այս բոլորը հանգեցրել էր նրան, որ, 1970թ. հետ համեմատած, 1979թ. ներհանրապետական և միջհանրապետական տեղաշարժերի պատճառով կրճատվել էր նաև շրջանի բնակչության թիվը (տե՛ս աղ. 29): Դեկտեմբերյան երկրաշարժի հետևանքով, երբ լրիվ կամ մասնակիորեն ավերվեցին շրջանի բոլոր գյուղական բնակավայրերը, մշակութա-

յին-կենցաղային և արտադրական օբյեկտները, Գյումրի, Սպիտակ, Վանաձոր քաղաքների համարյա բոլոր արտագնա խմբերը մնացին տեղում՝ հայրենի տունը վերականգնելու համար: Սակայն 1989թ. մայիս ամսին արտագնացների հետ անցկացված հարցումներից պարզվել է, որ հսկայածավալ շինարարական աշխատանքների առկայության պայմաններում, ինչպես աղետի գոտու, այնպես էլ մյուս շրջանների ոչ բոլոր արտագնա խմբերն էին ընդգրկված շինարարական աշխատանքներում, և նրանց որոշ մասը՝ հիմնականում աղետի գոտուց դուրս բնակվողները, նորից մեկնել էին հանրապետությունից դուրս: Աս պայմանավորված էր այն հանգամանքներով, որ հաճախ հաշվի չէին առնվում հանրապետությունում գոյություն ունեցող հարուստ աշխատանքային ռեսուրսների և հանրային արտադրությունում նրանց մի մասի ընդգրկված չլինելու փաստը: Մինչդեռ այսպիսի պայմաններում այդ աշխատուժը ընկնում էր օգնության եկած միութենական հանրապետությունների և այլ կազմակերպությունների կողմից:

Չորրորդ՝ առտագնա խմբերը, շինարարական օբյեկտների կառուցման գործում ցանկանալով առաջնորդվել բրիգադային կապալի և աշխատավարձի վճարման գործավարձային պարզատրաման սկզբունքներով, շինարարական կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքման հարցում հանդիպում էին լուրջ դժվարությունների:

Չինգերորդ՝ դրան որոշակիորեն նպաստեցին նաև նախնական շրջանում շինարարական նախագծերի բացակայությունը և կառուցվող քաղաքների հետ գյուղերի տեղանքի ընտրության հարցում ձգձգվածությունը:

Վեցերորդ՝ արտագնա խմբերը որոշակի դժվարությունների էին հանդիպում նաև շինանյութերի ապահովման հարցում, որը հանգեցնում էր նրանց աշխատանքային տեմպերի թուլացմանը:

Յոթերորդ՝ նախօրոք արտագնա աշխատանքի վայրում կնքված պայմանագրերը կամ էլ ամբողջությամբ ղեռնա չհանձնված շինարարական օբյեկտների առկայությունը:

¹ Այրումյան Ա., Հայաստանի գյուղատնտեսության տեղարաշխուժը և մասնագիտացումը, Ե., 1974, էջ 72:

² Թովմասյան Վ., Հայկական ՍՍՀ Արևմտյան (Շիրակի) տնտեսական շրջանի ժողովրդագրական գարգացման առանձնահատկությունները, Հայաստանի ժողովրդական անտեսություն, N12, 1985, էջ 37-38:

Աինչդեռ որպես որակավալ շինարարներ՝ արդյունավետ աշխատանքի շնորհիվ արտագնացները կարող էին մեծ ավանդ ներդնել վերականգնման այդ աշխատանքներում:

Մինչև երկրաշարժը արտագնացության տեմպերով երրորդ տեղը գրավում էր Լոռու ազգագրական մարզը (10%), որը տարածքով համընկնում էր Լոռու տնտեսական շրջանի հետ: Լոռիում ընդգրկված հանրապետության աճեմաբարձր արտագնա վարչատարածքային շրջաններից մեկից՝ Կալինինոյի (Տաշիրի) շրջանից, ամեն տարի արտագնացության էր մեկնում մոտավորապես երկու հազար մարդ: Լոռու տնտեսական շրջանը ծովի մակերևույթից գտնվում է 1500-2500մ բարձրության վրա և հիմնականում մասնագիտացված էր կաթ-

գիական, քիմիական, շինանյութերի արդյունաբերությունը:

Երկրաշարժից հետո այս շրջանում նույնպես կրճատվեցին արտագնացության տեմպերը:

Արտագնացության համեմատաբար բարձր տեմպեր են դիտարկվում նաև Գեղարքունիքի ազգաբնակչության մարզում (9%), որի բնակչության հիմնական մասը գաղթել էր Արևմտյան Հայաստանի Բայազետի, Ալաշկերտի շրջաններից: Այն իր տարածքով հանընկնում է Սևանի գլխավոր տնտեսական շրջանի հետ և գտնվում է ծովի մակերևույթից 1900-2400մ բարձրության վրա, որի հետևանքով անսառնամանիք օրերի տևողությունը կազմում է 1,5 ամիս:² Սա գյուղատնտեսական աշխատանք-

Աղյուսակ 29

Հայկական ՍՍՀ տնտեսական շրջանների զարգացման հիմնական ցուցանիշները՝
ըստ 1970, 1979թթ. մարդահամարների տվյալների*

Տնտեսական շրջանները	Տարածությունը (քառ.կմ)	Բնակչությունը (%)		Արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշիռը (%)			Արդյունաբերական արտադրական անձնակազմի տեսակարար կշիռը (%)		
		Ըստ 1970 թ. մարդահամարի	Ըստ 1979 թ. մարդահամարի	1/1-1970 թ.	1/1-1975 թ. (ընթացիկ հաշվ.)	1/1-1979 թ.	1/1-1970 թ.	1/1-1975 թ. (ընթացիկ հաշվ.)	1/1-1979 թ.
Արարատյան	19,5	51,5	54,5	69,0	65,6	63,0	63,8	62,1	61,3
Այդ թվում՝									
Երևանի	0,9	31,0	34,1	58,0	52,0	50,1	53,4	49,6	49,0
Շիրակի	13,4	12,4	11,9	9,8	9,8	10,0	11,4	11,6	11,7
Լոռու	13,7	12,5	11,7	12,0	12,7	13,2	12,1	12,6	12,8
Սևանի	21,8	11,0	10,8	3,6	5,2	6,3	5,6	6,1	6,3
Սյունիքի	22,5	7,6	6,7	3,6	3,9	4,3	4,0	4,4	4,5
Աղստևի	9,1	4,5	4,5	2,8	2,8	3,2	3,1	3,4	3,5

*Թիվնախառն Կ.Շ., Միմոնյան Ա.Ն., Աշխատուժի վերարտադրության բեզիոնալ առանձնահատկությունները. (Հայկական ՍՍՀ օրինակով), Ե., 1985, էջ 143:

նամաստու անասնապահության, հացահատիկային տնտեսության, կարտոֆիլագործության մեջ, որոնց արտադրության քանակով հանրապետությունում գրավում էր առաջնակարգ տեղերից մեկը¹: Շրջանում զարգացած էր մեքենաշինությունը, գունավոր մետալուր-

ներին հաղորդում էր սեբոնային բնույթ. որն էլ իր հերթին ազդում էր շրջանի աշխատուժի ուղիղալ օգտագործման վրա: Արտագնացության տեմպերին նպաստում էին նաև

² Производственно -- территориальный комплекс Армянской ССР (Экономико-географическое исследование проблемы формирования и развития), Е., 1970, с. 339.

¹ Աղումյան Ա., նշվ. աշխ., էջ 71:

չրջանի սոցիալ-տնտեսական և մշակութային-կենցաղային, ինչպես նաև ճոճանակային միգրացիայի զարգացման ցածր տեմպերը: Շրջանի արտազնացների չնչին մասն էր ընդգրկվել երկրաշարժի գոտու վերականգնման աշխատանքներում, իսկ մնացածը նորից մեկնել էր հանրապետությունից դուրս՝ արտազնացության: Օրինակ՝ Մարտունու շրջանում, որտեղից ամեն տարի արտազնացության էր մեկնում մոտավորապես հինգ հազար մարդ, 1989 թվականի մայիսի սվյալներով աղետալ շրջաններում շինարարական կազմակերպությունների հետ պայմանագրեր էին կնքել մի քանի տասնյակ արտազնաց խմբեր, որոնց թվաքանակը չէր գերազանցում 1000 մարդը: Նույն պատկերն էր նկատվում նաև Կամոյի (Գավառ) շրջանում:

Արտազնացության տեմպերը ցածր էին Տավուշի (5%) և Արարատի (2%) ազգագրական մարզերում: Տավուշը հիմնականում մասնագիտացված էր խաղողագործության, ծխախոտագործության բնագավառում: Այն ունի ծովո մակերևույթից 1000մ միջին բարձրություն: Անսառնամանիք օրերի թիվը հասնում է 230-ի: Տարեկան տեղումները հասնում են մինչև 300մմ-ի: Աեղմ բնակլիմայական պայմանների շնորհիվ գարունն այստեղ վաղ է սկսվում, իսկ աշունը երկարատև է: Անշուշտ, սա նպաստում էր գյուղատնտեսության բնագավառում բնակչության զբաղվածության բարձրացմանը: Շրջանում զարգացած էր նաև սննդի և թեթև արդյունաբերությունը: Արտազնացության ցածր տեմպերը Արարատի շրջանում պայմանավորված էին *Ուխտ* այն հանգամանքով, որ այստեղ էր գտնվում հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը, որի հետևանքով ձևավորվել էր հասուն տարածքային արտադրական համալիր¹: Այն համարվում էր հանրապետության տնտեսական միջուկը և ապահովում էր հանրային արտադրության գործընթացում ընկալության լրիվ զբաղվածությունը: Այդ գործում մեծ էր նաև Երևան քաղաքի դերը, որը հանրապետության ամենա-

խոշոր արդյունաբերական և մշակութային կենտրոնն էի: Բարեկարգ և ընդարձակ ճանապարհների ցանցով Երևան քաղաքի հետ էին կապված Արարատյան դաշտի մյուս քաղաքները՝ Արտաշատը, Էջմիածինը, Աբովյանը, Աշտարակը և այլն²: Ճոճանակային միգրացիայի զարգացման բարձր տեմպերը հնարավորություն էին տալիս տնտեսական շրջանի ներսում արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխմանը:

Երկրորդ՝ գյուղատնտեսության արտադրության բարձր մակարդակով: Շրջանը գտնվում է ծովի մակերևույթից 800-1400մ բարձրության վրա, որի հետևանքով օգտագործելի են նրա համարյա բոլոր հողատարածքները: Բարենպաստ ընկալիմայական պայմանների պատճառով գյուղատնտեսական աշխատանքների սեզոնը բավական երկար էր: Այն մասնագիտացված էր խաղողագործության, բանջարաբուծության, սլոդաբուծության, կաթնասնամասնախառնության բնագավառներում³:

Ըստ 29-րդ արյուսակի՝ ակնհայտ է, որ Վայոց ձորի և Սյունիքի պատմաազգագրական մարզերի բնակչությունը չի մեկնում արտազնացության: Միասին վերցրած՝ նշված մարզերն իրենց տարածքով համընկնում են Սյունիքի սոցիալ-տնտեսական շրջանի հետ: Տնտեսական զարգացման տեսանկյունից շրջանն ունի ոչ հարմար աշխարհագրական դիրք: Ծովո մակերևույթից մինչև 1000մ բարձրություն ունեցող տարածքները կազմում են 4,4%, իսկ 2000մ բարձրություն ունեցողները՝ 54%: Հարթ տարածքները կազմում են շրջանի 1,8%-ը, իսկ 5⁰-16⁰ և ավելի բարձրլեռնային թեքությունները՝ տարածքի մնացած մասը: Գոյություն ունեցող բարդ ռելիեֆային սպայմանները իրենց ազդեցությունն են թողնում շրջանի սոցիալ-տնտեսական զարգացման մի շարք բնագավառների և ընկալության կենսամակարդակի վրա⁴: Դա հանգեցրեց նրան, որ տեղի բնակ-

¹ *Валесян Л.А.*, Производственно-территориальный комплекс Армянской ССР, Е., 1970, с.319.

² *Վարդանյան Ռ., Գևորգյան Գ.*, ճոճանակային միգրացիան և նրա դերը Երևանի ագլոմերացիայի աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման գործում, Հայաստանի ժողովրդական տնտեսություն, N11, Ե., 1986, էջ 44:

³ *Այրումյան Ա.*, նշվ. աշխ., էջ 68-69:

⁴ *Валесян Л.А.*, указ. соч., с.345-347.

չության մեծ մասը գերադասում էր ոչ թե մեկ-մեկ արտագնացության, այլ փոխել իր մշտական բնակության վայրը հանրապետության ներսում: Դրա հետևանքով գյուղական բնակչության բնական աճը Սյունիքի սոցիալ-տնտեսական շրջանում 1970-1979թթ. կրճատվել էր 4,3%-ով: Այդ մասին որոշակի պատկերացում է տալիս աղյուսակ 30-ը:

Չնայած գրադեցրած իր տարածքով, մյուս տնտեսական շրջանների հետ համեմատած՝ այն գրավում էր առաջին տեղը, բայց ըստ 1979թ. մարդահամարի տվյալների՝ այնտեղ ապրում էր հանրապետության բնակչության միայն 6,7%-ը (տե՛ս աղ. 29), իսկ 1կմ²-ում ապրում էր 29 մարդ:

Աղյուսակ 30

ՀիսՄ բնակչության բացարձակ աճը ըստ տնտեսական շրջանների 1970-1979թթ.¹

Տնտեսական շրջաններ	Ամբողջ բնակչությունը		
	Ընդամենը	Բալթիկ	Գյուղական
1. Արարատյան, այդ թվում՝ Երևան	379,8 260,5	341,5 -	38,3 -
2. Շիրակի, այդ թվում՝ Լեռնիականի	51,1 41,6	50,2 -	0,9 -
3. Լոռու, այդ թվում՝ Կիրովականի	45,2 39,4	48,6 47,9	-3,4
4. Սևանի	52,6	-	4,7
5. Սյունիքի	12,1	16,4	4,3
6. Աղստևի	11,7	14,7	-3,0
Ամբողջ հանրապետությունում	538,8	511,0	27,8

Արտագնացության պատկերը ամբողջական է դառնում, երբ վերը քննարկված օբյեկտիվ գործոնների հետ վերլուծում ենք անհատի միգրացիոն վաղքի ձևավորումը և այդ գործընթացին նրա մասնակցության ընդհանուր դրդապատճառները: Միգրացիոն վարքի մեխանիզմների ձևավորման գործում հանգուցային տեղ են գրավում անհատի պահանջ-մունքները: Այն ունի բարդ կառուցվածք, որը արտահայտվում է շահերի, նպատակների, ձգտումների, ցանկությունների, արժեքային կողմնորոշման ձևով և համարվում է անհատի

գործունեության ակտիվության կարևորագույն աղբյուր:

Անցկացված էթնոսոցիոլոգիական հետազոտություններում արտագնացության դրդապատճառները հարցաթերթիկում վավերացված են երկու տիպի հարցով, որոնցից մեկը առաջադրված է բաց հարցով և նպատակ ուներ բացահայտելու հարցվողի կարծիքը, իսկ մյուսը՝ փակ հավանական պատասխանների թվաքանակով: Սա բարձրացնում է ստացված հավանական պատասխանների հավաստիությունը, որը հնարավորություն էր ընձեռում միգրացիայի դրդապատճառներում բացահայտելու անհատի էթնիկական վաղքագիծը:

Ինչպես կարելի է դատել աղյուսակ 31-ից, մեկնման առավել իօթանիչ դրդապատճառը արտագնացները համարում են արտագնա աշխատանքի վայրում ավելի բարձր աշխատավարձ ստանալը (39%): Այսպիսի պատասխանն ուներ իրական հիմքերը, երբ մենք համեմատում ենք տեղում և արտագնա աշխատանքի վայրում նրանց ստացած եկամուտները:

Աղյուսակ 31

Արտագնացության դրդապատճառները՝ ըստ տարիքային կազմի (70-ու)

Արտագնացների տարիքային կազմը	Տեղում համապատասխան աշխատանքի չափակայութունը	Արտագնա աշխատանքի վայրում հնարավորություն ես ավելի բարձր աշխատավարձ ստանալ	Փող է հարկավոր մեծ ծախսումների համար	Այլ պատճառներ	Ընդամենը
18-29	29	41	18	12	100
30-49	30	36	24	10	100
50 և ավելի	29	40	23	8	100
Ընդամենը	29,3	39	21,7	10	100

Բացի ստացած աշխատավարձից, գյուղական բնակչության 13%-ի շրջանում ընտանիքի եկամուտները ձևավորվում էին նաև նրանց անձնական օժանդակ տնտեսությունից: Չնայած դրան՝ այն չէր բավարարում

¹ Թովմայան Վ. Սիմոնյան Ս., նշվ. աշխ., էջ 215:

նրանց բազմանդամ ընտանիքի հարաճուն պահանջները: Հարցման արդյունքներով, ընտանիքի յուրաքանչյուր անդամի միջին դրամական եկամուտը չէր գերազանցում մոտավորապես 30-40 ռուբլին: Այդ պատճառով արտագնա աշխատանքի մեկնելուց առաջ նրանց 84%-ը բավարարված չէր, իսկ 11%-ը ոչ լրիվ էր բավարարված ընտանիքի դրամական եկամուտների չափերից: Մինչդեռ դրությունն այլ է արտագնա աշխատանքի վայրում. «Նրանք, ինչպես նշում էր Տ. Ջասլավսկայան, առավելագույն եկամուտը գնահատելով առավելագույն աշխատանքով»¹, 5-7 ամսվա ընթացքում վաստակում էին 6-8, նույնիսկ 10 հազար ռուբլի: Տարվա ընթացքում ամսական միջին աշխատավարձը կազմում էր 400 մինչև 800 ռուբլի, որը 3-4 անգամ ավելի էր 1985թ. Հայկական ԽՍՀ ժողովրդական տնտեսության մեջ զբաղվող յուրաքանչյուր աշխատողի և ծառայողի միջին ամսական աշխատավարձից (180ռ.)²:

Աղյուսակ 32
Միջին ամսական աշխատավարձը տեղում և արտագնա աշխատանքի վայրում (%-ով)

Աշխատավարձի չափը (ռուբլիներով)	Տեղում	Արտագնա աշխատանքի վայրում
81-100	21	-
101-150	40	-
151-200	30	-
201-250	7	-
251-300	1	-
301-400	1	-
401-500	-	28
500-1000	-	48
1000-ից բարձր	-	24

Նախ՝ արտագնացները այսպիսի բարձր աշխատավարձ հեշտությամբ չէին վաստակում: Այն ձեռք էր բերվում օրական 14-15-ժամյա՝ շաբաթվա ընթացքում նույնիսկ առանց հանգստյան օրերի, արդյունավետ և ծանրաբեռնված աշխատանքային զրաֆիկի շնորհիվ:

¹ *Заславская Т.И.*, Решающее условие ускорения социально-экономического развития. Экономика и организация промышленного производства, N3,1986, с. 8.

² Народное хозяйство Арм. ССР в 1985 г., Статистический ежегодник, Е., 1986, с. 212.

Երկրորդ՝ առաջնորդվելով աշխատանքի կազմակերպման բրիգադային կապալի և աշխատավարձի վճարման գործավարձային պարզևատրման սկզբունքներով՝ արտագնացները կատարում էին տիպային պայմանագրով նախատեսվող օբյեկտի հանձնման ժամկետները և ստանում 25-40 տոկոս հավելյալ վարձատրություն:

Երրորդ՝ նրանք ընտրողական վերաբերմունք ունեին ԽՍՀՄ-ի այն շրջանների նկատմամբ, որտեղ մի կողմից զգացվում էր աշխատանքային ռեսուրսների խիստ պակաս, մյուս կողմից՝ տեղի աշխատանքային դրությունը հնարավորություն էր տալիս իրենց աշխատուժը կիրառել ժողովրդական տնտեսության մի շարք բնագավառներում:

Ըստ հետազոտության արդյունքների՝ այդպիսիք էին ՌԽՖՍՀ-ի հյուսիսային և արևելյան շրջանները, ուր մեկնում էր արտագնացների 80%-ը, և Ղազախական ԽՍՀ՝ 6%-ը:

Չորրորդ՝ արտագնացները, լինելով բարձր որակավորում ունեցող ոչ ինդուստրիալ (շինարար, ծեփագործ, հյուսն, ատաղձագործ և այլն) և ինդուստրիալ (մեխանիկատոր, ավտովարորդ, խառատ և այլն) բնագավառի աշխատողներ, հիմնականում ընդգրկվում էին շինարարական աշխատանքներում, որտեղ աշխատավարձը, համեմատած ժողովրդական տնտեսության մյուս բնագավառների հետ, ավելի բարձր էր:

Աղյուսակ 33
Արտագնացության տարիները՝ ըստ գրադվածության ուղղությունների (%-ով)

Տարիները	Ընդհանուր շինարարություն	Վերամրոցում	Ասֆալտ	Խառն աշխատանքներ	Ընդամենը
1-3	65	13	15	7	100
3-6	66	8	19	7	100
6-10	50	11	25	14	100
10 տարի և ավելի	67	8	18	6	100
Ընդամենը	62	10	19.5	8.5	100

Աղյուսակ 33-ից երևում է, որ ըստ արագնացության տևողության՝ նրանց 63%-ը ընդգրկվում էր շինարարության, 19%-ը՝ ճանապարհների ասֆալտապատման, իսկ 9%-ը կատարում էր վերանորոգման և այլ աշխատանքներ:

վա ընթացքում գտնել աշխատանք՝ համապատասխան մասնագիտությամբ:

Վերը նշվածը պայմանավորված էր նաև գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացմամբ և ինդուստրացմամբ, որի հետևանքով աշխատունակ բնակչության որոշ

Աղյուսակ 34

ԽՍՀՄ-ի տարբեր շրջաններից արտագնացների ուղարկած դրամական եկամուտները¹ (հազ. ռուբլի)

Վարչական միավորներ	Տարեթվեր							
	1960	1966	1969	1975	1980	1981	1982	1985
Արթաշի երկրամաս	32	622	1083	2997	4082	3552	4160	4436
Ամուրի մարզ	10	535	535	1961	1663	1877	1755	2693
Բաշկիրական ԽՍՀ	32	445	616	875	930	2230	2672	2572
Իրենուտսկի մարզ	79	382	938	1165	1701	1793	1529	2059
Կրասնոդարի երկրամաս	14	603	1036	1023	1919	2018	1561	1630
Յանուպոլսկի ԽՍՀ	28	297	797	608	1354	1448	1646	1472
Նովոսիբիրսկի մարզ	26	654	836	498	1701	2545	2394	2298
Չիտայի մարզ	76	1219	1417	1190	1185	1391	1382	1742
Պրիմորիեի երկրամաս	37	257	1109	1075	1205	986	1125	1464
Օրենբուրգի մարզ	52	1025	1640	2199	4267	4386	4000	4953
Ընդամենը	386	6039	11433	13293	20221	22104	24228	25319

Սեզոնային արտագնա աշխատանքի վայրից հանրապետության արտագնացների տարեկան միջին եկամուտը 1985թ. կազմել է մոտավորապես 120 մլն ռուբլի¹: Նրանց վաստակած դրամական եկամուտների մասշտաբների և դինամիկայի մասին որոշակի պատկերացում են տալիս երկրի տարբեր շրջաններից ինստիտուտների միջոցով Հայաստան ուղարկված հաշվարկագրերը²:

Ըստ աղյուսակ 31-ի վիճակագրական տվյալների՝ արտագնացության մեկնելու հաջորդ կարևոր ղըղապատման (30%) տեղում համապատասխան աշխատանքի բացակայությունն էր, որի հիմքում ընկած էին ըստ ազգագրական մարզերի արդեն վերը քննարկված օրյեկտիվ պատճառները: Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջաններում աշխատանքային տեղերի և աշխատանքի կիրառման ոլորտների բացակայության պայմաններում այնքան էլ հեշտ չէ ամբողջ տար-

մասը դուրս էր մղվում այդ բնագավառից: Այսպես օրինակ, Արթիկի շրջանի Փանիկ գյուղում, որտեղ ըստ էթնոսոցիոլոգիական հետազոտության՝ 1985. հունվարի 1-ի դրությամբ բնակչության ընդհանուր թիվը կազմում էր ամբողջ շրջանի բնակչության 11%-ը, որից 52%-ը աշխատունակ հասակի տղամարդիկ էին, գյուղում ամբողջ տարվա ընթացքում աշխատանք էր գտել նրանց միայն 13%-ը: Աշխատանքային տեղերի բացակայության պայմաններում գյուղի աշխատունակ հասակի տղամարդկանց 22%-ը համարյա ամեն տարի մեկնում էր արտագնա աշխատանքի:

Նույն պատկերն էր նկատվում նաև Հայաստանի մյուս արտագնա շրջաններում: Գյուղատնտեսության բնագավառում ընդգրկված բնակչության լրիվ զբաղվածության վրա իրենց ազդեցությունն էին թողնում նաև բնակլիմայական ինչպես պայմանները, որի մասին իրոսվեց վերևում: Գյուղատնտեսական աշխատանքների սեզոնայնությունը առավել ցայտուն էր դրսևորվում հողագործության մեջ. այստեղ յուրաքանչյուր աշխատողի զբաղվածությունը տարեկան կազմում էր 150 օր³: Այդ աշխատանքային ռեսուրսների օգտագոր-

¹ Фёдоровык В., указ. соч., с. 73.

² Դրամական փոխանցումները չէին գերազանցում ընդհանուր հաշվարկագրերի գումարի 5%-ը: Դրանց պետք է ավելացնել նաև այն փաստը, որ հաճախ արտագնացներն ընտանիքի անդամներին և բարեկամներին նվերներ, ինչպես նաև կենցաղային առարկաներ գնելու եամար կատարում էին մոտավորապես 500-1000 ռուբլու ծախսեր:

³ Թովմասյան Վ., Սիմոնյան Ա., նշվ. աշխ., էջ 185:

ծումն ուներ որոշ առանձնահատկություններ. դրանք տարվա ընթացքում օգտագործվում էին ոչ հավասարաչափ՝ առավել ինտենսիվ ամառային շրջանում և ոչ լրիվ՝ ձմռանը¹:

Արտագնացների որոշ մասը (22%) մեկնում էր աշխատանքի տեղում մեծ ծախսերի համար գումար հայթայթելու նպատակով: Այդ ծախսերի զգալի մասն ունի «ազգային ընթացի»՝ պայմանավորված դարեր շարունակ հայ իրականության մեջ գոյություն ունեցող ավանդույթներով և սովորույթներով: Դեռևս XIX դարի վերջին՝ հայ ընտանեկան համայնքի գոյության պայմաններում, նրա յուրաքանչյուր անդամ ուներ հավասար իրավունքներ ինչպես անշարժ (հող, տնտեսական կառույցներ, ընկարան և այլն), այնպես էլ շարժական (դրամագլուխ, անասուններ և այլն) գույքի նկատմամբ: Ընտանեկան համայնքի քայքայումից հետո, անկախ շնչերի քանակից, դրանք հավասար (ախպերարժին) բաժանվում էրն ժառանգորդների միջև²: Հայաստանի տարրեր ազգագրական շրջանների վերաբերյալ նման օրինակների կարելի է հանդիպել XIX դարի վերջի և XX դարի սկզբի ազգագրական գրականության մեջ. «Բաժանուելիս համարեա բոլորովին ի նկատի չի առնվում եղբայրների վաստակը: 20-25 տարի վաստակող քառասուն և հինգ ամեայ եղբայրը հավասար բաժին է ստանում քսանամեայ եղբոր. կամ 10-20 տարի առաջ վախճանուած եղբոր մի քանի տարեկան երեխայի հետ»³:

Սովորույթի համաձայն՝ հայրական տունը ժառանգում էր փոքր եղբայրը, որտեղ շարունակում էր ապրել ծնողների հետ, իսկ «մնացածի համար, եթե չէր բավարարում ընկելի տարածքը, ընդհանուր միջոցներից նրանց համար տուն էրն կառուցում, կամ միջոցներ էրն առանձնացնում տան կառուցման համար»⁴:

¹ Методологические проблемы системного изучения деревни (Под. ред. Заславской Т.И., Рыбкина В.Р.), Новосибирск, 1977, с. 206.

² Карапетян Э.Т., Пережитки патронимических отношений у армян (вторая половина XIX и начало XXвв.), М., 1964, с. 3.

³ ԱՅ, գիրք X, Թիֆլիս, 1903, էջ 127:

⁴ Карапетян Э.Т., Армянская семейная община, Е., 1958, с. 99.

Նման ավանդական վարքագիծն ու մտածողության ձևերը կայուն կերպով պահպանվել և դրսևորվում էին գյուղական ընկալության շրջանում, որոնք արտագնացության գործընթացում կարևոր պայման էին նրանց էթնիկ վարքի ձևավորման գործում: Հայրը և որդիները արտագնա աշխատանքի վայրում վստահակաժ դրամով հոգում էին ոչ միայն իրենց, այլև բաժանվող մյուս անդամների ընկարանի կառուցման ծախսերը (րացառությամբ աղջկա, որը, ավանդույթի համաձայն, ամուսնանալուց հետո «օտարվում» է հայրական տնից, և նրա ընկարանի կառուցման համար հոգում են ամուսնու ծնողները): Այդ իսկ պատճառով այն ստորև բերված աղյուսակում կազմում է 3%:

Աղյուսակ 35

Ընկարանի կառուցման ծախսեր (%-ով)

Տարիքային կազմը	Ում համար է կառուցում ընկարանը			Դժվարությամբ կատարված	Ընդամենը
	Իր համար	Որդու համար	Կտրուկ համար		
18-29	74	9	4	13	100
30-49	41	44	2	13	100
50 և քարծր	25	58	3	14	100
Ընդամենը	47	37	3	13	100

Այս հարցում կարևոր էր նաև գյուղի հասարակության կարծիքը. դատապարտում էր այն ծնողներին, ովքեր առանց ընկարան կառուցելու առանձնացնում էին իրենց որդիներին: Աղյուսակի տվյալներից ակնհայտ է, որ որդու համար ընկարան կառուցելու դրդապատճառը (58%) խոշոր դեր էր կատարում 50 և ավելի րարծր տարիք ունեցող արտագնացների մոտ: Այս կապակցությամբ այն հարցին, թե «Ի՞նչ պայմանների դեպքում կդադարեք արտագնացության մեկնել», 30-49, 50 և ավելի րարծր տարիք ունեցող արտագնացների պատասխաններում հաճախ կարելի է հանդիպել «երեխաների չափահաս դառնալուց, նրանց ամուսնացնելուց (նպատակին հասցնել), ինչպես նաև ընկարանով ապահովե-

լուց հետո»: Երիտասարդ տարիքային խմբում սեփական ընկերական ունենալու հանգամանքը 74% հարցման մասնակիցների շրջանում համարվել է արտագնացության մեկնելու կարևոր դրդապատճառ:

Այդ ժամանակաշրջանում արտագնացության կարևոր խթաններից էրն նաև ամուսնական արարողությունների՝ հատկապես հարսանիքի և դստեր օժիտի հետ կապված ծախսերը: Գյուղական բնակչության մեջ հարսանեկան ծեսը և օժիտը շատ կարևոր երևույթներ են և ունեն «գարգացման և ընդարձակման տենդենցներ»,¹ որոնց իրագործման համար պահանջվում են մեծ գումարներ: Հարցումներից պարզվել է, որ այդ գումարները հաճախ հասնում էին նույնիսկ 4000-5000 ուրլու:

Աղյուսակ 36

Հարսանեկան ծեսերի և օժիտի ծախսերը՝ ըստ արտագնացների տարիքային կազմի (%-ով)

Սնվոր ձևեր նյութի	Ո՞ւմ համար են հարսանեկան ծեսերի և օժիտի ծախսերը			Երբ ունեցվում է ծախսերը	Միջոցառումը
	Իր համար	Տղայի համար	Դստեր համար		
18-29	85	1	1	13	100
30-49	15	40	35	10	100
50 և բարձր	-	50	40	10	100
Ընդամենը	33.3	30.3	25.4	11	100

Գյուղական բնակչության որոշ մասը այն ձեռք էր բերում արտագնա աշխատանքի վայրում: Անշուշտ, այս գործում կարևոր դեր էին կատարում մի կողմից՝ ընտանիքի նյութական ապահովման աստիճանը, մյուս կողմից՝ երևույթի վերարտադրյալ յուրաքանչյուր գյուղում ձևավորվող նոր չափանիշներն ու հասարակական կարծիքը:

Հարսանեկան ծեսերի և օժիտի հետ կապված ծախսերը, ըստ տարիքային կազմի, ունեն որոշ առանձնահատկություններ:

Աղյուսակ 36-ի տվյալները ցույց է տալիս, որ եթե 18-29 տարեկանները մեկնում էին ար-

տագնա աշխատանքի հիմնականում իրենց հարսանեկան արարողությունների համար (85%) դրամ վաստակելու, ապա 50 և ավելի բարձր տարիք ունեցողները՝ ինչպես տղայի (50%) հարսանեկան արարողության, այնպես էլ դստեր (40%) օժիտի:

XX դարի 80-ական թվականներին հարսանեկան ծեսերում և օժիտի պարունակությունում նկատվել են ավանդականի նվազման և նոր տարրերի ավելացման միտումներ: Արտագնա աշխատանքի վայրում վաստակած մեծ գումարները հիմք էին շքեղ հարսանեկան արարողությունների և ճոխ օժիտի համար: Եթե անցյալում օժիտը հիմնականում բաղկացած էր կնոջ անձնական օգտագործման և տնտեսական գործունեության իրերից, որի պարտադիր մասն էին կազմում նաև հարսնացուի ձեռքով պատրաստված առարկաները՝ ասեղնագործ սփռոցներ, ծածկոցներ, վարագույրներ և այլն, ապա 80-ական թթ. օժիտի ծավալը մեծ չափերի էր հասել²: Այն կնոջ անձնական օգտագործման իրերի և տնային գործածության թանկարժեք առարկաների հետ ընդգրկում էր զանազան կահկարասի: Արտագնացների մեծ մասը հաճախ այդ ամենը ձեռք էր բերում արտագնա աշխատանքի վայրում: Օժիտի նման կազմը գյուղական բնակչության շրջանում հաճախ ընկալվում էր որպես պարտադիր չափանիշ, որը բացասաբար էր անդրադառնում նրանց հոգեբանության և արժեքային կողմնորոշման վրա՝ տեղիք տալով «ուրիշից հետ չմնալու» մրցակցության սովորույթին³: Գյուղի բնակչության սոցիալական պահանջումները համակարգում ընտանեկան կենցաղի մեծ հաբմարավետության ձգտումը խթանում էր նրանց միգրացիոն վարքի ձևավորմանը: Արտագնացության դրդապատճառները այդ տարիներին նույնիսկ արտացոլվել են ժողովրդի ստեղծած բազմաթիվ կատակերգերում:

Խոպան կերթաս, դարդակ կուզաս,

Հոպ, մերիկը մեռնի,

Խոպան կերթաս, դարդակ կուզաս,

¹ Сабурова Л.М., Отражение этнических процессов в развитии обрядности. — Этнографические аспекты изучения современности, Л., 1980, с. 40.

² Կարապետյան Է., Օժիտը հայոց մեջ (Պատմագագագրական ուսումնասիրություն), Ե., 1978, էջ 115:

³ Նույն տեղում, էջ 111:

*Գյառղանդ խուրդ եղնի:
Հաղլը կերթա Վոլգա բերե,
Հոսս, մերիկդ մեռնի,
Դու էլ կերթաս Օլգա բերես,
Գյառղանդ խուրդ եղնի...*

(Շիրակի ազգագրական մարզ)

Արտագնա աշխատանքի վայրում ձեռք բերված դրամական մեծ վաստակների շնորհիվ նրանց ընտանեկան կենցաղի համար բնութագրական են մի շարք թանկարժեք իրեր (տե՛ս աղ. 37):

Աղյուսակ 37

Արտագնացների՝ կենցաղային իրերով ապահովվածությունը՝ ըստ տարիքային կազմի (%-ով)

Տարիքային կազմը	Կահույք	Ավտոմեքենաներ	Դաշնամուսուկ	Գնեռակ	Գունավոր սևաշուկա	Մնացորդ
18-29	14	40	-	33	13	100
30-49	30	28	6	23	13	100
50 և բարձր	40	21	3	21	15	100
Ընդամենը	28	29.7	3	25.7	13.6	100

Աղյուսակից երևում է, որ արտագնացների 29.7%-ը ապահովված էր ավտոմեքենաներով, 28%-ը՝ կահույքով, 25.7%-ը՝ հեռախոսով, 13.6%-ը՝ գունավոր հեռուստացույցով, 3%-ը՝ դաշնամուսուկով:

Մանրամասն հարցումներից պարզվել է, որ արտագնացության այլ դրդապատճառները, ըստ տարիքային կազմի, ունեն որոշ առանձնահատկություններ: Օրինակ՝ 18-29 տարեկանները արտագնացության կարևոր խթան էին համարում «նոր աշխարհներ» տեսնելը, այլ ազգության մարդկանց հետ շփվելը, նոր մասնագիտության ձեռքբերումը, ուսաց լեզվը իմացությունը խորացնելը՝ արտագնա աշխատանքի վայրում ընդհանուր առմամբ ուսումնական հաստատություն ընդունվելու համար: Գյուղական երիտասարդության շրջանում արտագնացությանը նպաստում էր նաև տեղում մշակութային-կենցաղային հաստատությունների բացակայությունը կամ դրանց ոչ րավարար աշխատանքը, որի հետևանքով

դեռևս պատշաճ մակարդակի վրա չէր ազատ ժամանակի նախատակասլաց օգտագործումը:

Ըստ աղյուսակի տվյալների՝ հայրենի գյուղի մշակութային-կենցաղային պայմաններից «բավարարված չեն» երիտասարդ սերնդի 47%-ը, իսկ ներկայացված բոլոր խմբերի՝ 35.4%-ը: Այն հարցին, թե «Որո՞նք են արտագնացության մեկնելու Ձեր գլխավոր պատճառները», 18-29 տարեկանները, բացի վերը նշվածներից, հարցաթեթիկում հաճախ նշել են նաև «երիտասարդության համար աշխատանքի և հանգստի լավ պայմանների՝ մշակութային օջախների բացակայությունը»:

Աղյուսակ 38

Կենցաղ-մշակութային պայմանների վերաբերյալ արտագնացների գնահատականը՝ ըստ տարիքային կազմի (%-ով)

Տարիքային կազմը	Բավարարված են	Բավարարված են մասամբ	Բավարարված չեն	Դիվարացի են պատասխանելու	Մնացորդ
18-29	9	42	47	2	100
30-49	33	34	30	3	100
50 և բարձր	25	45	29	1	100
Ընդամենը	22.3	40.3	35.4	2	100

Երկրորդ և երրորդ խմբի արտագնացները, որպես այդպիսին, համարել են «ընտանիքի ընթացիկ ծախսերը հոգալու և նեղ օրվա համար» դրամական եկամուտների վաստակումը:

Այսպիսով, ընդհանրացնելով XX դարի 80-ական թթ. Հայաստանի գյուղական բնակչության արտագնացության մեկնելու հիմնական գործոնները, կարող ենք եզրակացնել, որ այն առաջին հերթին կապված էր օբյեկտիվ պայմանների՝ աշխարհագրական դիրքի, ռելիեֆի, խիստ բնակչիմասայական պայմանների հետ: Դրանք էականորեն ազդում էին տարածքի յուրացվածության մակարդակի՝ գյուղատնտեսության, արդյունաբերության զարգացման և նրա տեղաբաշխման, ճանապարհաշինության, բնակչության սոցիալ-մշակութային կյանքի պայմանների վրա: Վերջիններս էլ

իրենց հերթին հիմք էին ծառայում աշխատուժի ոչ լրիվ զբաղվածության համար:

Արտագնացության սուբյեկտիվ գործոնների հիմքում ընկած էին անհատի անձնական շահերը և պահանջմունքները. սրանք էլ նպատակ էին հետապնդում ռարձրացնելու նյութական բարեկեցության մակարդակը:

Դրդապատճառների այդպիսի համակարգը կապված է նաև անհատի էթնիկ վարքագծի հետ, որը ձևավորվում էր ազգային ավանդույթների և սովորույթների, ինչպես նաև ազգային հոգեբանության ազդեցության ներքո: